1. Անունը, ազգանունը. Արման Ղազարյան
2. Զբաղեցրած պաշտոնը. ՀՀ ՊԵԿ ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժնի պետ
3. Գործուղման վայրը և ժամկետները.Բելառուսի Հանրապետություն, ք. Մինսկ, 08.08.2022-12.08.2022թ.
4. Հրավիրող կողմը. Ֆինանսական մոնիտորինգի միջազգային ուսումնամեթոդական կենտրոն ՌԴ
5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախա¬տեսված գործուղումը). Ոչ առևտրային կազմակերպությունների հնարավոր ներգրավվածությունը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման տեսնկյունից
6. Քննարկված թեմաները.Ինչպես իրականացնել ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական գործարքների վերահսկողություն վերջիններիս կողմից ներգրավվածությունը ՓԼ/ԱՖ նպատակով բացառելու համար:
7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. Հանդիպում/սեմինար քննարկումները տեղի են ունեցել ԱՊՀ ֆինանսական հետախուզության մարմինների խորհրդի անդամ պետությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների միջև:
8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը. Տեղի է ունեցել փորձի փոխանակում և պայմանավորվածություն է ձեռք բերվել ավելի սերտ համագործակցություն իրականացնել նշված թեմաների շուրջանակներում: Փաստաթղթեր չեն ստորագրվել:
9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները. Կարող ենք արձանագրել, որ ՀՀ ՊԵԿ և ԿԲ աշխատակիցների

կողմից տարիներ շարունակ կատարվել է ահռելի աշխատանք ոչ առևտրային կազմակերպությունների հաշվետվողականությունը ապահովելու, հրապարակված աշվետվությունների բազմակողմանի վերլուծություն իրականացնելու առումով: Դրա վառ ապացույցն էր այն հանգամանքը, որ ներկա գտնվող պետությունների կողմից այսօր կատարվում են աշխատանքներ՝ ունենալու համար այն ձեռքբերումները, որոնք ՀՀ-ն ունեցել է դեռ 2020 թվականին: Քննարկումների ժամանակ հնչել են գաղափարներ որոնք իրագործելի կլինել ԱՊՀ երկներում բացառությամբ ՀՀ-ի միայն 2024 թվականից հետո, իսկ ՀՀ-ում ըստ ՊԵԿ և ԿԲ աշխատակիցների գնահատման դրանք կիրագործվեն մինչև 2022 թվականի ավարտը: Վերոնշյալ աշխատակիցների կողմից պայմանավորվածություն է ձեռք բերվել ստեղծել աշխատանքային խումբ հնարավորինս արագ համագործակցության իրականացման և արդյունքում տվյալների փոխանակմանն ուղղված աշխատանքների իրականացման նպատակով, հնարավորինս ավելի թիրախային և սեղմ ժամկետներում ՓԼ/ԱՖ դեմ պայքարելու կամ կանխարգելելու համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը: 15.08.2022թ.